ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի՝ Էստոնիայի Հանրապետություն (Տալլին) գործուղման արդյունքների վերաբերյալ

Անունը, **ազգանունը**, **զբաղեցրած պաշտոնը՝** Գրիգոր Մինասյան, ՀՀ արդարադատության նախարար:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Էստոնիայի Հանրապետություն (Տալլին), 2023թ. մայիսի 15-ից 19-ը:

Հրավիրող կողմը՝ Էստոնիայի Հանրապետության արդարադատության նախարարություն:

Գործուղման նպատակը՝ Ճանաչողական այց՝ ԵՄ կողմից ֆինանսավորվող «Ադ-հոկ Աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների իրականացմանը» ծրագրի շրջանակներում:

Քննարկված թեմաները՝ նոտարական համակարգի, դատական համակարգի թվայնացման աշխատանքների՝ քաղաքացիական, քրեական և վարչական ուղղություններով, ինչպես նաև քրեակատարողական ծառայության հետ կապված հարցեր:

Հանդիպումները, **ելույթները**, **բարձրացված կամ քննարկված հարցերը**.

Այցի շրջանակներում Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը ծանոթացել է արդարադատության ոլորտի բարեփոխումների իրականացման գործընթացում Էստոնիայի Հանրապետության լավագույն փորձին՝ մասնավորապես թվայնացման ոլորտում:

Էստոնիայի արդարադատության նախարարի, ինչպես նաև կոնկրետ ոլորտներ համակարգող այլ պաշտոնատար անձանց հետ քննարկվել են երկու երկրների արդարադատության նախարարությունների գործառույթները, ինչպես նաև ընթացող թվայնացման գործընթացները: Ընդգծվել է Էստոնիայի արդարադատության ոլորտի թվայնացումը՝ որպես աշխարհի լավագույն օրինակներից մեկը և կարևորվել այցը՝ հաշվի առնելով ՀՀ-ում ընթացող

դատարանների և արդարադատության այլ համակարգերի թվայնացման լայնածավալ գործընթացները:

Միաժամանակ, ներկայացվել են նոտարական համակարգի, ինչպես նաև դատական համակարգի թվայնացման աշխատանքները՝ քաղաքացիական, քրեական և վարչական ուղղություններով: ՀՀ պատվիրակությանն են ներկայացվել արդեն իսկ գործարկված և բնակչությանը սպասարկող առկա թվային համակարգերն ու հնարավորությունները:

Այցի շրջանակներում նախարարը այցելել է նաև Էստոնիայի Հանրապետության արդարադատության նախարարության Քրեակատարողական ծառայություն: Պաշտոնական այցի ընթացքում ուսումնասիրվել են Տարտու քաղաքի քրեակատարողական հիմնարկի թվային ծառայությունները, դատապարտյալների և կալանավորների պահման պայմանները, վերասոցիալականացման ուղղությամբ իրականացվող ծրագրերն ու ներդրված գործիքները: Արդարադատության նախարարը հանդիպումներ է ունեցել Էստոնիայի Հանրապետության Գերագույն դատարանի նախագահի, պետական տեղեկատվական համակարգի ղեկավարի, նոտարական պալատի նախագահի, տվյալների պաշտպանության մարմնի, ռեգիստրի և տեղեկատվական համակարգերի կենտրոնի, իրավաբանների միության ղեկավարի հետ:

ՀՀ արդարադատության նախարար

Invalid signature

X

Grigor Minasyan

Signed by: MINASYAN GRIGOR 3312830419

Գրիգոր Մինասյան

24.05.2023**թ**.

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ արդարադատության նախարարություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը համարը ՀՀ վարչապետի 10.05.2023թ. թիվ 500-Ա որոշում
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը Գրիգոր Մինասյան, ՀՀ արդարադատության նախարար
(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)
4. Գործուղման վայրը Էստոնիայի Հանրապետություն (Տալլին)
5. Գործուղման ժամկետները 2023թ. մայիսի 15-19-ը
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)
ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)
(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)
□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Գրիգոր Մինասյան*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)		
	Ավիատոմսի արժեքը (դրամ)		
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)		
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)		

Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)			

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՍԻՐՎԱՐԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ